AZG NEW PDF.qxd 14/04/2010 21:32 Page 1

Ազգ
Azg
15 ԱՊՐԻԼ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 67 (4447)
ISSN: 1829-1651
9 771829 165003 10067

# Ռուսաստանի հայերի միության նախատեսած միջոցառումներ՝ Ցեղասպանության զոհերի հիշատակին

Ռուսաստանի հայերի միությունը ապրիլի 23-ին եւ 24-ին ՌԴ մայրաքաղաքում կկազմակերպի մի շարք միջոցառումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Մոսկվայում կառուցվող Հայ առաքելական եկեղեցու տարածքում ապրիլի 23-ին կկազմակերպվի հատուկ արարողություն՝ «Ողջգիշերային հսկում»: Իսկ ապրիլի 24-ին ծաղկեպսակներ կդրվեն նույն տարածքում տեղադրված հայկական խաչքարի առջեւ, այնուհետեւ սգո պատարագ կլինի Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի մասնակցությամբ: Երեկոյան Մոսկվայի Երաժշտության միջազգային տանը կկազմակերպվի երեկույթ՝ նվիրված Ցեղասպանության 95-ամյակին:

# Դավութօղլուն ադրբեջանական «ԱՊԱ»-ին հարցազրույց չի տվել

*Նալբանդյան. «ԼՂ հարցում Հայաստանը երբեւէ որեւէ զիջման չի գնա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նպատակով»*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




Հայաստանի նախագահի այցելությունը Վաշինգտոն շատ կարեւոր է գնահատել հայաստանցի լրագրողների հետ ճեպազրույցում երեկ արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**: Ըստ ԱԳՆ հաղորդագրության՝ Նալբանդյանը նշել է, որ վերջին շրջանում Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ հաստատվել են սերտ բարեկամական գործընկերություն, բարձր մակարդակի քաղաքական երկխոսություն, ակտիվ շփումներ երկու երկրների ղեկավարությունների միջեւ:

«Այս այցելությունը եւ հանդիպումները կարեւոր էին թե երկկողմ հարաբերությունների առավել ամրապնդման, թե երկու կողմերին հուզող տարածաշրջանային եւ միջազգային հարցերի քննարկման առումով: Նախագահ Սարգսյանի հանդիպումները նախագահ Օբամայի ու պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ հնարավորություն տվեցին շարունակել կառուցողական երկխոսությունը եւ քննարկումները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, ինչպես նաեւ Ղարաբաղի խնդրի հանգուցալուծման շուրջը», ասել է արտգործնախարարը:

Իսկ թե ինչ վիճակում է հայ-թուրքական գործընթացը վաշինգտոնյան այցելությունից հետո, Նալբանդյանը ներկայացրել է, որ Սերժ Սարգսյանի հանդիպումը Էրդողանի հետ հնարավորություն է տվել ավելի հստակ պատկերացնել թուրքական կողմի դիրքորոշումը, համոզվելով, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերջին զարգացումների վերաբերյալ հայկական կողմի գնահատականները ճիշտ են:

Տես էջ 3

# ՀԱՄԱՌՈՏ

## Հովարդ Բերմանը նամակ է հղել գործընկերներին

Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն տեղեկացնում է, որ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ **Հովարդ Բերմանը** նամակ է հղել իր կոնգրեսական գործընկերներին, որով դատապարտել է Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ ուղղված թուրքական լոբբիի քայլերը. «Ես չեմ ընդունում այն փաստարկները, որոնք անում են մեր ընդդիմախոսները՝ փորձելով կասեցնել հայկական բանաձեւի մուտքն ու նաեւ վավերացումը Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստում», ասված է Բերմանի նամակում: Իր հերթին Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի տնօրեն **Արամ Խաչատրյանը** նշել է, թե իրենք հույսով են, որ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ղեկավարությունը՝ նախագահ Նենսի Փելոսին եւ մեծամասնության ղեկավար Սթենի Հոյերը, կհետեւի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանին եւ, հաշվի չառնելով թուրքական լոբբիի հակառակ ջանքերը, ակտիվորեն կհամագործակցի իրենց գործընկերների հետ՝ վերջնականապես վավերացնելու հայկական բանաձեւը Կոնգրեսում:

Հ. Ա.

## Չավուշօղլուն առաջարկում է ղարաբաղյան հարցով ենթակոմիտե ստեղծել

Երեկ Բաքվում գտնվող Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ **Մեւլյութ Չավուշօղլուն** հայտնել է, որ ապրիլին տեղի կունենա Ադրբեջանի եւ Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունների ղեկավարներ Սամեդ Սեյիդովի եւ Դավիթ Հարությունյանի հանդիպումը: «Հանդիպումը կկայանա ընթացիկ տարվա ապրիլին: Դրա ընթացքում կքննարկվի ղարաբաղյան խնդրով ենթակոմիտեի վերստեղծման հարցը», ասել է Չավուշօղլուն լրագրողներին:

Նրա խոսքով՝ իրենք եւս հանդիպում կանցկացնեն Ադրբեջանի եւ Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունների հետ եւ կքննարկեն Լեռնային Ղարաբաղի խնդրով ենթակոմիտեի գործունեության վերականգնումը:

«Նախ եւ առաջ մենք ցանկանում ենք, որ այդ հարցում գործի դրվի խորհրդարանական դիվանագիտությունը», ընդգծել է Չավուշօղլուն:

Հ. Ա.

## Կոսովոյի հարցը չի կարող քննարկվել, Ղարաբաղինը կարո՞ղ է

ԱՄՆ-ը հայտարարել էր, որ Կոսովոյի կարգավիճակի եւ տարածքային ամբողջականության հարցը չի կարող քննարկման առարկա դառնալ Պրիշտինայի եւ Բելգրադի միջեւ: Այս մասին Կլոկոտում, որտեղ մեծ մաս են կազմում սերբերը, ասել է Կոսովոյում ԱՄՆ դեսպան **Քրիստոֆեր Դելը**: «Կոսովոն եւ Սերբիան երկխոսություն կարող են վարել գործնական հարցերի շուրջը՝ որպես երկու անկախ պետություն: Բայց դա հնարավոր կդառնա միայն այն ժամանակ, երբ Բելգրադը կընդունի երկրամասի կարգավիճակը», ասել է դեսպանը:

Հ. Ա.

# Անհասկանալի, շփոթված Բաքու

Ադրբեջանի կառավարության նիստում ելույթ ունենալով՝ երկրի նախագահ **Ալիեւ** կրտսերը հայտարարել է, որ Ադրբեջանը հավատարիմ է իր սկզբունքային դիրքորոշմանը Ղարաբաղի հարցում, որը «հիմնված է միջազգային իրավունքի վրա»: «Այնինչ Հայաստանը պարբերաբար ձգձգում է բանակցային գործընթացը՝ վերջնականապես չտալով իր համաձայնությունը նորացված մադրիդյան սկզբունքների վերաբերյալ, սա անթույլատրելի է: Ես կոչ եմ անում միջնորդ երկրներին՝ չպաշտպանել Հայաստանին եւ ճնշում գործադրել նրա վրա», հայտարարել է Իլհամ Ալիեւը: Այս ամենից նորությունն այն է, որ Ադրբեջանի նախագահի խոսքերով՝ միջնորդ Մինսկի խմբի համանախագահ երկրները, պարզվում է, «պաշտպանում են» Հայաստանին, իսկ հերթականը եւ արդեն զավեշտի վերածվող հերթականը Ալիեւի ասածների մեջ «նորացված» մադրիդյան սկզբունքներն են: Մի՞թե Իլհամ Ալիեւն էլ չգիտի, որ այդպիսիք պարզապես չկան, կան մադրիդյան սկզբունքներ, որոնց վերաբերյալ Երեւանը, արտգործնախարար Նալբանդյանի խոսքերով, վաղուց է արտահայտել իր դրական դիրքորոշումը, իսկ այն, ինչ «նորացված» է, ընդամենը առաջարկություններ են կողմերին, «աշխատանքային պահեր», ինչպես, «պաշտպանելով Երեւանին», օրերս հայտարարեց Մինսկի խմբի համանախագահ **Յուրի Մերզլյակովը**:

Հ. ԱՓՅԱՆ

# Վաշինգտոնում եւ Մոսկվայում

**Ապրիլի 13-ին Վաշինգտոնում գտնվող Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովին: Ինչպես տեղեկացնում է ՀՀ ԱԳՆ մամուլի ծառայությունը, հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ օրակարգի մի շարք հարցեր: Անդրադարձ է կատարվել նաեւ ԵԱՀԿ-ի եւ ՄԱԿ-ի շրջանակներում երկու երկրների փոխգործակցությանը, մտքեր են փոխանակվել տարածաշրջանային իրավիճակի, մասնավորապես ԼՂ հիմնահարցի կարգավորման գործընթացի վերաբերյալ:**

**Իսկ ապրիլի 12-ին գրեթե նույն հարցերը քննարկվել էին արդեն Մոսկվայում՝ Հայաստանի եւ Ռուսաստանի փոխարտգործնախարարներ Շավարշ Քոչարյանի եւ Գրիգորի Կարասինի միջեւ: ՌԴ ԱԳՆ տարածած հայտարարությունից տեղեկանում ենք, որ կողմերը քննարկել են «երկկողմ եւ տարածաշրջանային օրակարգի հարցեր»:**

# ԱՊՀ-ի պաշտպանության նախարարները համաձայնեցրել են Հաղթանակի 65-րդ տարեդարձի տոնակատարության պլանները

**Մոսկվայում երեկ մեկնարկած ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների համաժողովում նախարարները համաձայնեցրել են այն միջոցառումների պլանները, որոնք կապված են Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 65-րդ տարեդարձի տոնակատարության հետ: Այդ մասին ՌԻԱ «Նովոստիին» հայտնել է Համագործակցության պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղարության մամուլի քարտուղար Միխայիլ Սեւաստյանովը: Նա նաեւ տեղեկացրել է, որ նիստում քննարկվել են քսանից ավելի հարցեր, որոնք վերաբերում են ԱՊՀ-ի ռազմական գերատեսչությունների գործակցությանը՝ տարբեր ոլորտներում: «Հաղթանակի 65-րդ տարեդարձի տոնակատարության նախօրեին հանդիպման մասնակիցները քննարկեցին հոբելյանական հանդիսությունների կազմակերպման, զոհվածների հիշատակի հավերժացման ոլորտում գործակցության եւ հաղթողների սերնդի ապրող ներկայացուցիչների նկատմամբ հոգատարության դրսեւորման հարցերը», ասել է Սեւաստյանովը:**

**Նիստի սկզբում մասնակիցները ընդունել են դիմում՝ ուղղված Հայրենական մեծ պատերազմի վետերաններին եւ բարեկամ բանակներում ծառայող զինվորականներին:**

# «Օբաման ստացավ ազդանշանը, կարծում եմ՝ «ցեղասպանություն» բառը չի արտասանի»

*Հայտարարել է Թուրքիայի վարչապետը ԱՄՆ նախագահի հետ հանդիպման ավարտին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպելուց հետո՝ ապրիլի 13-ին Վաշինգտոնում հրավիրված միջուկային անվտանգության գագաթաժողովի շրջանակում, ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հանդիպեց նաեւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին: Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ 15, իսկ մամուլի՝ 20 րոպե նախատեսվող այս հանդիպումը շուրջ 45 րոպե էր տեւել:

Հարկ է սակայն նշել, որ կողմերը թարգմանիչի միջոցով էին շփվում, ուստի Օբամա-Էրդողան հանդիպման տեւողությունը պետք է համարվի ավելի քան 20 րոպե: Հանդիպմանը մասնակցել են ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնն՝ իր տեղակալ Ջիմ Ջոնսի ուղեկցությամբ, Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, եւ դա անցել է «շատ ջերմ ու անկեղծ» մթնոլորտում:

Հանդիպմանը Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերություններին եւ Իրանի միջուկային ծրագրին առնչվող խնդիրների առաջնահերթությամբ կողմերը քննարկել են տարածաշրջանային բազմաթիվ հարցեր:

Սակայն, ինչպես այդ մասին ապրիլի 14-ի համարում նշում են «Հյուրիեթը», «Սաբահը» եւ «Ռադիկալը», Օբամա-Էրդողան քննարկումների առանցքը կազմել են հայ-թուրքական արձանագրությունները: Էրդողանը, «Սաբահի» վկայությամբ, ընդգծել է Թուրքիայի հավատարմությունը Հայաստանի հետ ստորագրված արձանագրություններին, նշելով ապրիլի 24-ին «ցեղասպանություն» արտահայտության օգտագործումից խուսափելու կարեւորությունը հայ-թուրքական նորմալացման գործընթացի ճակատագրի համար, իսկ նախագահ Օբաման վերստին հորդորել է վավերացնել արձանագրությունները:

Ի դեպ, արձանագրությունների հարցն առաջնահերթ նշանակությամբ քննության է առնվել արտգործնախարար Դավութօղլուի հետ պետքարտուղար Քլինթոնի նույն օրվա երկու առանձին հանդիպումներում:

Տես էջ 4

AZG NEW PDF.qxd 14/04/2010 21:08 Page 1



# ՀԴՄ բոնուսների տրամադրման նոր կարգը ապրիլի 1-ից սկսել է գործել

## *Ինչպե՞ս է դա կատարվելու եւ ի՞նչն է փոխվել անցյալ տարվա համեմատ*

***Ինչպես հայտնի է, անցյալ տարվա 4-րդ եռամսյակում հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կտրոնների բոնուսների տրամադրումը կառավարության որոշմամբ դադարեցվեց: Այս տարի այդ գործընթացը շարունակվելու է, բայց փոփոխված պայմաններով, ինչի մասին մանրամասներ իմանալու նպատակով զրուցեցինք պետեկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ալավերդյանի հետ: Մեր զրուցակիցը նախ անդրադարձավ անցյալ տարի ՀԴՄ-ների վիճակահանության եւ բոնուսների տրամադրման արդյունքներին:***

Նշելով, որ միջին հաշվով ՀԴՄ կտրոնների դիմաց քաղաքացիներին բոնուսի տեսքով վերադարձվում էր վճարվող գումարի 3-3,2 տոկոսը, պետեկամուտների կոմիտեի փոխնախագահը տեղեկացրեց, որ տարեկան վերադարձվող գումարը կազմել էր 3,8 մլրդ դրամ: Իսկ 4-րդ եռամսյակում բոնուսների տրամադրումը, ըստ նրա, կասեցվեց առաջ եկած մի շարք խնդիրների հետեւանքով, որոնցից ամենակարեւորը այն չարաշահումներն էին, որ կատարում էին հաստատագրված վճարով հարկվող օբյեկտները` բենզակայաններ, գազալցակայաններ, վարսավիրանոցներ եւ այլն: Նրանք անհարկի տրամադրում էին մեծ գումարների ՀԴՄ կտրոններ, քանի որ դա չէր ազդում նրանց վճարած հարկերի վրա, որի արդյունքում շատ դեպքերում բյուջեից խոշոր գումարներ էին տրվում:

Ինչ վերաբերում է այս տարի բոնուսների տրամադրման կարգին, ապա դրանում մի շարք նորություններ կան: Ի տարբերություն անցած տարվա, երբ բոնուսները բանկերը տրամադրում էին հարկային մարմինների միջնորդագրերի հիման վրա, ապա այս տարվա ապրիլի 1-ից դրանք տրամադրվելու են անմիջականորեն բանկերից: Ներկայումս երեք բանկեր` «Արարատ բանկը», «ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկը», «Հայբիզնեսբանկը», ինչպես նաեւ «Հայփոստի» մասնաճյուղերում մեր քաղաքացիները կարող են ստանալ իրենց բոնուսները: Նախկինում, միջնորդագրը ստանալիս հարկային մարմիններում հսկայական հերթեր էին գոյանում, քանի որ ընդամենը 35 տարածքային ստորաբաժանում կար, եւ մարդկային ռեսուրսները չէին բավարարում այդ քանակի մարդկանց սպասարկելու համար:

Հաջորդ փոփոխությունը վերաբերում է հաստատագրված հարկ վճարողներին, որոնց տրամադրած կտրոնները վիճակահանությանը մասնակցելու են, բայց այլեւս դրանցով բոնուսներ չեն տրամադրվելու: «Այդ կտրոնները տարբերակելու համար նրանց դարձերեսին երկու եզրաշերտով կապույտ գծեր են անցնում, որոնք անզեն աչքով տարբերվում են սովորական կտրոններից», ասաց Արմեն Ալավերդյանը:

Երրորդ նորությունն այն էր, որ եթե անցյալ տարի բոնուսները տրամադրում էին որոշակի սանդղակով եւ վերադարձվող գումարի չափը արժեքի միջինը 3-3,2 տոկոսն էր, ապա այս տարի` 1 տոկոսը: Այս նորությունն, ինչ խոսք, բնակչության համար հաճելիներից չէր, եւ Արմեն Ալավերդյանից փորձեցինք տեղեկանալ, թե ինչո՞ւ է ցածրացվել բոնուսների չափը, որն անպայման կնվազեցնի կտրոններ պահանջելու բնակչության շահագրգռվածությունը: Դա էլ իր հերթին կբերի ստվերից դուրս բերվող բյուջետային լրացուցիչ մուտքերի նվազեցմանը: Ի դեպ, մեր զրուցակիցը հայտնեց, որ 2009-ին բոնուսների շնորհիվ բյուջեն 5,8 մլրդ դրամի եկամուտ է ունեցել:

«Ես, իհարկե, համաձայն եմ, որ որքան շատ գումար վերադարձվի, այնքան մարդը շահագրգռված կլինի ձեռք բերելու ՀԴՄ կտրոններ եւ ստանալ գումարներ», ի պատասխան մեր հարցի` նշեց պետեկամուտների կոմիտեի փոխնախագահը, ավելացնելով, որ 1 տոկոսի վերաբերյալ որոշման կայացումը տնտեսական իրողությունների հետեւանք էր: «3,2 տոկոսով սպասարկելը, ինչպես անցյալ տարի էր, չէր կարող տեղավորվել պետական բյուջեի ծախսերի մեջ, քանի որ կանխիկ գումարի վերադարձ պետք է լիներ: Դրա համար որոշվեց 1 տոկոս սահմանել, եւ ես չեմ կարծում, թե դա հավերժ է», ասաց Արմեն Ալավերդյանը ավելացնելով, որ, իր կարծիքով, ճիշտ չէ «ամեն ինչ կառուցել տոկոսի վրա, ինչը սպասարկման եւ այլ խնդիրներ կառաջացնի»: Փոխարենը նա անհրաժեշտ համարեց վիճակահանությունը գործող կարգը կատարելագործել, գրավիչ դարձնել քաղաքացիների համար, որից հետո, հարկերի աճին զուգահեռ, նոր բոնուսային համակարգի շուրջ զարգացման հնարավորություններ փնտրել:

Արմեն Ալավերդյանը տեղեկացրեց, որ ներկայումս պատրաստվում է վիճակահանության կատարելագործման նոր նախագիծ, որտեղ առաջարկվելու է, որ ոչ թե 4 եւ ավելի թվերը շահող լինեն, այլ 3 եւ ավելի թվերը եւ ոչ միայն մեկ ուղղությամբ` ձախից աջ, այլ նաեւ հակառակ ուղղությամբ` աջից ձախ: Այս դեպքում, ըստ հարկային մարմնում կատարված հաշվարկների, շահողների թիվը շուրջ 20 անգամ ավելացնելու հնարավորություն կա: Նախատեսվում է նաեւ շահումների մեխանիզմները կատարելագործվել: Վիճակահանության շահումների չափի եւ այլ մանրամասների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը, սակայն, մեր զրուցակիցն վաղաժամ համարեց:

Այդուհանդերձ, կցանկանայինք նշել, որ չնայած կատարված անհրաժեշտ փոփոխություններին, ինչպիսիք են հարկային մարմնից միջնորդագրեր ստանալու գործընթացի վերացումը, հաստատագրված հարկ վճարողների ՀԴՄ կտրոնները բոնուսերի ցանկից հանելը, բոնուսների չափը մինչեւ 1 տոկոս նվազեցնելը էապես նվազեցնում է ՀԴՄ կտրոններ պահանջելու բնակչության ակտիվությունը: Եթե եռամսյակի ընթացքում մեկ ընտանիքն ունենա առավելագույնը 400-500 հազար դրամի կտրոններ, ապա դրա 1 տոկոսի չափով, այսինքն` 4-5 հազար դրամ բոնուս ստանալու համար ոչ ոք չի գնա բանկի կամ փոստի մասնաճյուղ: Առավել եւս, որ բանկերի մասնաճյուղերում, թեեւ բոնուս ստացողներն այնքան էլ շատ չեն, մեկ քաղաքացու կտրոնները հաշվելու գործընթացը տեւում է նվազագույնը 1-1,5 ժամ: Եթե դրան ավելացնենք այն փաստը, որ բանկի աշխատակիցները կարող են մերժել ընդունել նույն օբյեկտից կատարված մեծաքանակ գնումներով կտրոնները, ինչին ականատես ենք եղել, ապա հետաքրքրությունը բոնուսների նկատմամբ չնչին կդառնա: Ուստի, որպեսզի դա տեղի չունենա, որպեսզի մարդկանց գոնե որոշակի շահագրգռվածությունը պահպանվի, անկախ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ դժվարություններից, անկախ վիճակահանության կարգի բարելավումից, հույժ անհրաժեշտ է, որ բոնուսների չափը լինի ՀԴՄ-ների արժեքի գոնե 2 տոկոսը: Եվ հրաշալի է, որ այս փոփոխությունը կատարվի արդեն երկրորդ եռամսյակի կտրոնների համար:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

# Անցյալի ստուգատես եւ հայացք դեպի ապագա

**Ապրիլի 16-ին Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանում բացվելու է քանդակագործ Արա Շիրազի, գեղանկարիչներ Ռոբերտ Էլիբեկյանի եւ Էդուարդ Խարազյանի ստեղծագործությունների համատեղ ցուցահանդեսը, որը տեւելու է մինչեւ մայիսի 16-ը: Ցուցահանդեսը նաեւ հարգանքի ու գնահատանքի յուրահատուկ դրսեւորում է թանգարանի հիմնադիր, արվեստաբան Հենրիկ Իգիթյանի կիցները, օրինակ` Արա Շիրազի ստեղծագործություններում ամբողջովին արտահայտված են քանդակագործական մտածողության առաջադիմական սկզբունքները», ասաց արվեստաբան Պողոս Հայթայանը:**

**Առհասարակ, այս ցուցահանդեսի միջոցով կարող ենք հասկանալ, թե վերջին 4-5 տասնամյակում հայ կերպարվեստում ինչ միտումներ են եղել:**




**հիշատակին: Օրերս լրանում է Հենրիկ Իգիթյանի մահվան մեկ տարին:**

**«Գեղագիտական նմանատիպ ցուցահանդեսների առաջնային նպատակն է հասարակությանը հնարավորինս մոտեցնել բարձր արվեստին, որն այսօր, ցավոք, մոռացված է», «Ազգի»-ի հետ զրույցում նշեց Ժամանակակից արվեստի թանգարանի տնօրեն Լեւոն Իգիթյանը:**

**Ցուցահանդեսի գաղափարը ՀՀ ժողովրդական նկարիչ Ռոբերտ Էլիբեկյանինն է: 3 մասնակիցներն էլ եղել են թանգարանի առաջին ցուցադրվողները:**

**«Անցյալ դարի 60-ականների երկրորդ կեսից հայկական արվեստում երեւացին մարդիկ, ովքեր փոխեցին նախորդ շրջանի գեղագիտական սկզբունքները: Ցուցահանդեսը հասկանշական է նաեւ նրանով, որ վերջին 40 տարվա գեղագիտական գործընթացներն ամփոփում են հենց այս երեք մասնա-**

**«Մեր` 60-ականների սերունդը սոցռեալիզմի ընդհանրական տիրույթից տարբերվում է առաջին հերթին իր ձեւամտածողությամբ, եւ բացի այդ` ցուցահանդեսը, լինելով անցյալի ստուգատես, միաժամանակ ուղղված է մեր ապագային», ավելացրեց Արա Շիրազը:**

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

***Հ.Գ. Ցուցահանդեսի նախօրեին մասնակիցներն ու կազմակերպիչները լրագրողների հետ հանդիպելու նպատակով հավաքվել էին Հայաստանի ժուռնալիստների միությունում, սակայն ոչ մի լրատվամիջոց, բացի «Ազգ»-ից, չէր ցանկացել լուսաբանել ասուլիսը, հետեւաբար ասուլիսը չկայացավ, այլ եղավ միայն հարցազրույց «Ազգի» եւ հյուրերի միջեւ:***

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Սխալ եք զանգահարել

Ազգային ժողովի պատգամավոր: Հնչում է, չէ՞: Ու նաեւ ենթադրել տալիս, որ ոչ թե իր, այլ ժողովրդի այս կամ այն հատվածի շահերը ներկայացնելու համար խորհրդարան մտած անձը, նիստերին մերթ ընդ մերթ մասնակցելուց ու «կոճակասեղմ» գործունեություն ծավալելուց զատ, այլ անելիքներ ու պարտականություններ էլ պետք է ունենա: Ասենք` պատասխանի հեռախոսազանգերին: «Դրա համար քարտուղարուհիներ, օգնականներ ու մամուլի հետ կապի գծով պատասխանատուներ կան», կխոժոռվի Պատգամավորը: Իհարկե, կան եւ քիչ չեն, ու եթե ենթադրենք, որ նրանց պարտականություններից ամենագլխավորը բազմազբաղ ու հոգնատանջ Պատգամավորին պատահական, անտեղի, անտրամաբանական, մի խոսքով` տհաճ հեռախոսազանգերից պաշտպանելն է, ասենք, որ նրանք լավ գիտեն ու փայլուն են կատարում իրենց գործը: Բայց խոսքն այդ մասին չէ:

Պաշտոնյաները` լինեն խոշոր, միջին, մանր կամ շատ մանր ըստ պաշտոնական հիերարխիայի, մարմնի եւ ծառայողական (անձնական) ավտոմեքենայի չափերի կամ մեծելակերպի, այդ թվում եւ վերը նշված մեր ծանոթ Պատգամավորը, հասարակական անձինք են: Տեղի-անտեղի, փրփուրը բերանին ժողովրդի համար ու ժողովրդի անունից խոսելու փոխարեն լավ կլիներ, ավելին` հիանալի կլիներ, որ նրանք հիշեին այդ մասին եւ ժամանակ առ ժամանակ պատասխանեին սեփական բջջային հեռախոսի զանգերին: Ճիշտ է, բջջայինը, հատկապես թանկարժեք, անծանոթ համարներից եկած հեռախոսազանգերի համար չէ, բայց կարելի է, չէ՞, գոնե բացառության կարգով, ասենք` ամիսը 1-2 անգամ (գրաֆիկը կարելի է քննարկել օգնականների հետ ու փոփոխել, եթե ծանրաբեռնված է) խախտել ավանդույթը: Հատկապես այն դեպքում, երբ հերթական պաշտոնյան կամ մեզ արդեն հարազատ դարձած Պատգամավորն այնպիսի բան է ասել կամ արել, որ բացի իրենից ոչ ոք գլխի չի ընկնում, թե հատկապես ինչ է ասել կամ արել տվյալ հասարակական անձը, առավել եւս` ինչու: Եվ թյուրըմբռնումներից ու չճշտված տեղեկատվություն տալուց խուսափել ցանկացող լրագրողը, փորձելով «առաջին ձեռքից» պարզաբանումներ ստանալ, ընկնում է կրակը: «Բաժանորդն անհասանելի է, փորձեք ավելի ուշ»: Դա` լավագույն ու մարդկային ձայնով միակ պատասխանն է, որ լսում է խեղճ լրագրողը: Տարբերակներից են նաեւ լռությունը, հեռախոսափողը չվերցնելը, ծանր շնչառությունը, «Սխալ եք զանգել» արտահայտությունը եւ վերջապես. «Դա ես չեմ»-ը, երբ 100-ից 90 դեպքում ասողը հենց ինքն է, ում պատասխանից կամ պարզաբանումից է կախված լրագրողի բարեխիղճ աշխատանքը:

Ի՞նչ եք կարծում, հարգելի պատգամավորներ, չարժե՞ մի լրացում կատարել, կամ որ ավելի լավ է, առանձին օրենք ընդունել, որով կսահմանափակվեն լրագրողի` զանգեր կատարելու իրավունքը: Այնտեղ կարելի է ներառել, ասենք, «Լրագրողը, եթե անձնապես ծանոթ չէ ու ջերմ հարաբերություններ չունի պաշտոնյայի հետ, իրավունք չունի զանգահարելու նրան», «Լրագրողները պետք է մեկ ամիս առաջ հերթագրվեն` իրենց զանգերին պատասխան ստանալու հույսով» կամ վերջապես` «Լրագրողնե՛ր, հանգիստ թողեք չինովնիկներին» դրույթները: Ու չմոռանաք նշել, թե կարգը խախտողները նվազագույն աշխատավարձի քանիպատիկի չափով պետք է տուգանվեն: Թե չէ այս ի՞նչ է կատարվում` ում մտքով ու երբ անցնի` զանգում է: Թողե՛ք հանգիստ աշխատեն մեր հայրենի պաշտոնյաները, այդ թվում` վերը նշված Պատգամավորը:

**ԱՐԾՐՈՒՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**
**Report.am**

AZG NEW PDF.qxd 14/04/2010 21:08 Page 1



# Վաշինգտոնյան հանդիպումը արձանագրեց հետքայլ

Վաշինգտոնում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի եւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի միջեւ կայացած հանդիպման վերաբերյալ երեկ տեսակետներ հայտնեցին քաղաքական գործիչներն ու փորձագետները:

«Ժառանգություն» կուսակցության պատգամավոր **Լարիսա Ալավերդյանը** համոզված է, որ հարաբերությունները վերջնականապես մտան փակուղի: «Վաշինգտոնյան հանդիպման արդյունավետությունը կասկածի տակ ենք դնում, քանի որ ամեն ինչ որոշվում է մինչեւ հանդիպումները»: Նա նկատում է, որ եթե կողմերի նպատակը սահման բացելն ու դիվանագիտական հարաբերություններ հաստատելն է, ապա ավելորդ եւ անտեղի են արձանագրություններում սահմաններին եւ Ղարաբաղի խնդրին վերաբերող կետերը: Ալավերդյանը վստահ է. գործընթացը բացասական է անդրադարձել Ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա, եւ կարելի էր սպասել ճանաչման ավելի մեծ ալիք, քան Շվեդիայի խորհրդարանն ու ԱՄՆ արտաքին հարաբերությունների հանձնաժողովը:

Ալավերդյանը վստահ է, որ եթե ապրիլի 24-ին Օբաման արտասանի «ցեղասպանություն» բառը, դա դեռեւս չի նշանակում ճանաչել: Նա ԱՄՆ նախագահի ցեղասպանություն բառի արտասանությանը մեծ նշանակություն չի տալիս. կարեւորը Կոնգրեսի 252-րդ բանաձեւի ընդունումն է:

ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ անդամ **Հրայր Կարապետյանը** բարձր գնահատեց նախագահի Վիլսոնի գերեզմանի մոտ արած հայտարարությունը, որը փաստեց, որ Հայաստանն ու սփյուռքը միասնական են: Թեպետ Դաշնակցությունը գոհ է նախագահի ելույթից, սակայն դա չի նշանակում, որ ՀՅԴ-ն կվերադառնա իշխանություն, ընդհակառակը, կշարունակեն ընդդիմության դիրքերից խոսել ոչ միայն արտաքին քաղաքականության, այլեւ սոցիալական հարցերի շուրջը:

Եթե որոշ վերապահումներով նախագահից գոհ են, ապա ԱԳՆ նախարար Էդվարդ Նալբանդյանը դեռ շարունակում է գտնվել դաշնակցական յուրաքանչյուր ներկայացուցչի քննադատության կենտրոնում: Նրանք շարունակում են պահանջել նախարարի հրաժարականը: Այս անգամ չի գոհացրել ԱԳՆ լուռ պահվածքը: «Նալբանդյանն արձագանքեց Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ հայերին արտաքսելու հայտարարությանը միայն խորհրդարանում վարչապետի ելույթից եւ քննադատությունից հետո»:

Կարապետյանը վստահ է, որ գործընթացից դուրս գալու լավագույն պահը բաց ենք թողել: «Հայաստանն այն ժամանակ պետք է դուրս գար, երբ Էրդողանը խոսեց 100.000 հայերի արտաքսման մասին, սակայն դեռ ուշ չէ. եթե մինչեւ ապրիլի 24-ը հայ-թուրքական հարաբերություններում բեկում չնկատվի, ապա Հայաստանը պետք է հրաժարվի այդ հարաբերություններից»:

Թուրքագետ **Արտակ Շաքարյանի** մեկնաբանությամբ՝ վաշինգտոնյան հանդիպումը հետքայլ էր: Նախագահի եւ վարչապետի 75 րոպեանոց հանդիպումից հետո բացակայող հստակ արդյունքները, հանդիպման ընթացքում համընդհանուր սառը մթնոլորտն ու կողմերի հայտարարությունները թույլ չեն տալիս թուրքագետին հանդիպումը անվանել մեկ քայլ առաջ: «Անցել է Թուրքիայից ձեռնտու տարբերակը, իսկ Հայաստանին բավարարող տարբերակը, հատկապես սահմանի բացումն ու դիվանագիտական հարաբերությունների կարգավորումը, ձեռք բերված կամ հետաձգված չէ, կարելի է ասել, որ կարճ ժամանակահատվածում հստակ հետքայլ է կատարվել»:

Արձանագրությունները մոտ ժամանակահատվածում չեն վավերացվի, ինչը հնարավորություն կտա Հայաստանին Թուրքիային մեղադրել անհետեւողականության մեջ: Վաշինգտոնյան հանդիպումը ձեռնտու էր ԱՄՆ-ին: Օբաման երկրորդ անգամ չի արտասանի Ցեղասպանություն բառը եւ դրա համար ունի հիմնավորում. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը շարունակվում է, հետեւաբար Կոնգրեսում 252-րդ բանաձեւի ընդունումն ու «ցեղասպանություն» բառի օգտագործումը կխոչընդոտեն այդ հարաբերությունները:

Արեւելագետ **Ռուբեն Սաֆրաստյանն** էլ վերլուծելով Վուդրո Վիլսոնի գերեզմանի մոտ նախագահի արած հայտարարությունը, նշում է, որ Հայաստանը չի գնա որեւէ զիջման ոչ Լեռնային Ղարաբաղի հակամարտության, ոչ էլ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: «Այդ ուղղությամբ Հայաստանի վրա ճնշում գործադրելու թուրքական կողմի փորձերն անօգուտ են: Նախագահի հայտարարությունից բխող երկրորդ կարեւոր եզրակացությունն ինձ համար այն է, որ Հայաստանն ու Սփյուռքը համերաշխ են ու կշարունակեն միասնական գործել Ցեղասպանության ճանաչման եւ հայերին հուզող բոլոր հարցերում»:

Վերլուծելով Էրդողանի՝ Մեյսոնի համալսարանում արած հայտարարությունը, Սաֆրաստյանը փաստում է, որ թուրքական կողմը Հայաստանի հետ փորձում է խոսել նախապայմանների լեզվով: «Եթե հաշվի առնենք, որ ՀՀ նախագահը կրկին հայտարարել է, որ Հայաստանը գործողությունների նման ձեւ չի ճանաչում, կարելի է հետեւություն անել, որ կողմերը մնում են նախկի դիրքորոշմանը»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Դավութօղլուն աղբբեջանական «ԱՊԱ»-ին հարցազրույց չի տվել

*1-ին էջից*

«Անրադարձվեցին վերջին շրջանում հասունացած հետագա քայլերի մեր պատկերացումներն ու մոտեցումները: Երբ հանրապետության նախագահը պահի, ժամանակի իմաստով անհրաժեշտ համարի, համապատասխան որոշման մասին կիրազեկվի նաեւ հանրությունը», պարզաբանել է Նալբանդյանը:

Սարգսյան-Էրդողան հանդիպմանը, ըստ Նալբանդյանի, թուրքական կողմի փորձն է եղել ԼՂ հարցով քննարկում ծավալել, սակայն պատասխանը եղել է այն, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը չի կարելի շաղկապել Ղարաբաղի խնդրի կարգավորման հետ: Նալբանդյանի կարծիքով, չկան պատճառներ ղարաբաղյան խնդրով քննարկումներ անցկացնել թուրքական կողմի հետ:

Վաշինգտոնում ԱԳ նախարարը հայտարարել է. «Նախեւառաջ ԼՂ կարգավորման գործում Թուրքիան չի կարող միջնորդ լինել, երկրորդ, ԼՂ հարցում Հայաստանը երբեւէ որեւէ զիջման չի գնա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նպատակով: Եվ, իհարկե, նաեւ պետք է նկատի ունենալ, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման շաղկապումը Ղարաբաղի խնդրին վնաս կհասցնի երկու գործընթացներին էլ: Դա նաեւ եռանախագահող երկրների դիրքորոշումն է»:

Եթե թուրքական կողմն իր հնարավորությունների իմաստով սխալ հաշվարկներ է արել, ապա, Նալբանդյանի խոսքերով, դա իրենց խնդիրն է: «Եթե մենք սկսել ենք այս գործընթացը այն փոխըմբռնմամբ, որ նախապայմաններ չեն կարող լինել, նույն փոխըմբռնմամբ շարունակել ենք գործընթացը եւ հանգել ենք արձանագրությունների ստորագրմանը», ասել է նախարարը, ավելացնելով, որ եթե Թուրքիան այսօր փոխել է իր դիրքորոշումը, ուրեմն համապատասխան եզրակացություններ պետք է արվեն, թե արդյոք մյուս կողմում կան այնպիսի գործընկերներ, որոնց հետ հնարավոր է շարունակել գործընթացը:

«Եթե Թուրքիան իրականում ցանկանում է այս գործընթացը չձախողել, պետք է շատ արագ գործնականում ցույց տա, որ պատրաստ է վավերացնել եւ իրականացնել արձանագրությունները եւ գնալ հարաբերությունների կարգավորման առանց նախապայմանների, ինչին սպասում է միջազգային հանրությունը», ընդգծել է Նալբանդյանը:

Նալբանդյանը լրագրողների խնդրանքով անդրադարձել է նաեւ Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուի հայտարարությանը ադրբեջանական «ԱՊԱ» գործակալությանը, թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կախված է Ղարաբաղի խնդրում առաջընթացից: Ըստ Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարի, ԱՄՆ պետքարտուղար Քլինթոնի կողմից միջուկային անվտանգության գագաթաժողովին մասնակցող արտգործնախարարների պատվին կազմակերպած ճաշի ժամանակ ինքը Դավութօղլուի հետ բավական հանգամանալից զրույց է ունեցել: Նալբանդյանի փոխանցմամբ. Դավութօղլուն ասել է, որ ընդհանրապես նման հարցազրույց ինքը չի տվել:

Նալբանդյանը եզրակացրել է. «Իհարկե, կարելի էր չհավատալ, որ ադրբեջանական գործակալությունը երկար-բարակ պատասխաններով հարցազրույց է տպում, ու Թուրքիայի արտգործնախարարն ասում է՝ նման հարցազրույց չի տվել: Բացի այդ հերքումից, որ պարոն Դավութօղլուն ինձ անձամբ ասաց, Թուրքիայի ԱԳՆ-ն արդեն հրապարակել է այդ հերքումը, որ նման հարցազրույց չի եղել: Սա կրկին ապացուցում է, որ ադրբեջանական լրատվամիջոցներին, թերթերին շատ քիչ պետք է հավատալ»:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

# Տիգրան Սարգսյան. «Դեռեւս ինտերնետի հասանելիության եւ գնի խնդիրներ ունենք Հայաստանում»

**Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը երեկ հրավիրած 10-րդ համագումարում նշեց գործունեության 10-րդ տարեդարձը: Ամփոփելով վերջին 10 տարվա արդյունքը՝ ոլորտի ներկայացուցիչներն ու մասնագետները նշեցին, որ Հայաստանը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում առաջընթաց է գրանցել: Չնայած ձեռքբերումներին, ներկաները նշեցին, որ դեռեւս կան չլուծված խնդիրներ: Վարչապետ Տիգրան Սարգսյանն իր խոսքում նշեց, որ 2009-ին Հայաստանը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գրանցել է 17 տոկոս աճ, ինչն՝ ըստ վարչապետի, բավականին խոստումնալից ցուցանիշ է:**

**«Դեռեւս ինտերնետի հասանելիության եւ գնի խնդիրներ ունենք Հայաստանում: Սակայն բարեփոխումներն ընթացքի մեջ են, մրցակցությունն այս տարի կուժեղանա, ինչը դրական կազդի և՛ գնի, և՛ ծառայությունների որակի վրա», ասում է վարչապետը:**

**Տիգրան Սարգսյանը նաեւ նշեց, որ Հայաստանում պետք է ձեւավորել ոչ միայն գիտելիքի վրա հիմնված տնտեսություն, այլեւ գիտելիքի վրա հիմնված հասարակություն: Ըստ նրա՝ ՏՏ-ն այն ոլորտն է, որը լրջորեն կարող է ազդել մեր հասարակության մտածողության վրա:**

**2010-ին միությունն աշխատելու է ավելի էժան ու որակյալ դարձնել ինտերնետ ծառայությունն ու հասանելիությունը: 2010-ի կարեւոր խնդիրներից է լինելու նաեւ «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի իրագործումն ամբողջ հանրապետությունում:**



**Ն. Ս.**

# Վիրահայերը խորհրդանշական՝ 1915 ստորագրություն են հավաքել

«Ազգ»-ը տեղեկացրել էր, որ վիրահայերը դիմել են վրաց իշխանություններին՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Այս կապակցությամբ Վրաստանի հայկական համայնքը երեկ հայաշատ Հավլաբար թաղամասում մեծ ակցիա էր կազմակերպել, որի ընթացքում հայտարարվեց, որ համայնքը դիմում է վրաց իշխանություններին, քաղաքական բոլոր ուժերին՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, դիմումը ստորագրել են 1915 վիրահայեր:

# Մարիամ Պետրոսյանի վեպը՝ մրցանակակիր

**Դեպի արտերկիր հեռարձակվող «Ռուսաստանի ձայն» պետական լրատուն ծանուցում է, որ Մոսկվայում հայտնի են դարձել «Ռուսկայա պրեմիա» գրական 5-րդ մրցույթում հաղթողների անունները:**

**Արձակ ժանրում լավագույն վեպ է ճանաչվել Հայաստանում ապրող Մարիամ Պետրոսյանի «Տունը, որ...» գիրքը: Այն պատմում է հաշմանդամ երեխաների մի գիշերօթիկի մասին: Մրցանակի արժանացած վեպը գրողի առաջին ստեղծագործությունն է:**

**Պոեզիայի ժանրում լավագույն գիրք է ճանաչվել ԱՄՆ-ում բնակվող Մարիա Տիտմակովայի «Ներկան»: Լավագույն կարճ պատմվածք է ճանաչվել Կիրգիզիայում բնակվող Ալիշե Նիյազովի «Ֆարհադ եւ Շիրին» ստեղծագործությունը:**

**Ռուսաց լեզվով գրականությունը խրախուսելու «Ռուսկայա պրեմիա» մրցույթը հիմնվել է 2005-ին: «ՌՊ»-ն ռուսական միակ մրցանակն է, որ տրվում է արտերկրում ապրող ռուսագիր գրողներին ու բանաստեղծներին:**

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Գերմանիա**

# 100 միլիոն դոլար հափշտակելու մեղադրանք՝ Կոնստանտին Կոլոյանին

**«Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ, որն իր հերթին հենվել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տեղեկության վրա, Ռուսաստանի դատախազության առընթեր քննչական կոմիտեի գլխավոր քննչական վարչությունը մոսկվացի Կոնստանտին Կոլոյանին Մոսկվայի Ազգային բանկից 100 միլիոն դոլար հափշտակելու մեղադրանք է առաջադրել: Ըստ որում նշվում է, որ մեղադրյալը ավելի քան 9 տարի թաքնվում էր քննությունից:**

**Քննչական կոմիտեի պաշտոնական ներկայացուցիչ Վլադիմիր Մարկինը հայտնել է, որ գործը հարուցվել էր դեռ 1999 թվականի հունվարին: Ըստ քննչական մարմնի, գործելով կազմակերպված հանցախմբի կազմում, Կոլոյանը կեղծված փաստաթղթերի հիման վրա կանխիկ դրամական միջոցներ է հափշտակել Մոսկվայի Ազգային բանկից: 2001 թվականի հունվարին Կոլոյանը, ինչպես նաեւ հիշյալ բանկի վարչության նախկին փոխնախագահ Յուրի Սիմոնենկոն ներգրավվել են որպես մեղադրյալներ, եւ նրանց նկատմամբ միջազգային հետախուզում է հայտարարվել:**

**«Քննությունը տեղեկություն ուներ, որ Կոլոյանը թաքնվում է նախկին միութենական հանրապետություններից մեկի տարածքում: Ապրիլի 9-ին Կոլոյանը ձերբակալվել է Մոսկվա ժամանելուն պես», ասել է դատախազության ներկայացուցիչը:**

**Հ. Ա.**

AZG NEW PDF.qxd 14/04/2010 21:09 Page 1



***Սա հրապարակումների շարքից մի հոդված է Եվրոմիության կողմից ֆինանսավորվող տարածաշրջանային ծրագրերի վերաբերյալ: Հոդվածներում ներկայացվում են մեր տարածաշրջանում իրականացվող նախագծերի վիճակն ու արդյունքները: Այս նյութում անդրադառնում ենք «Կուրի ավազանի անդրսահմանային գետերի կառավարում» ծրագրին:***

***Ծրագրի նպատակը Կուր գետի ավազանի ջրի որակի բարելավումն է անդրսահմանային համագործակցության եւ ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մոտեցում իրականացնելու միջոցով: Ծրագիրը աջակցում է ընդհանուր դիտարկման եւ տեղեկատվական կառավարման համակարգի զարգացմանը՝ բարելավելու անդրսահմանային համագործակցությունը. այն մեծացնում է շրջակա միջավայրի պահպանության պետական պատասխանատուների եւ դիտարկում իրականացնող հաստատությունների հնարավորությունները, ովքեր ներգրավված են Քուռ գետի ավազանի ջրային ռեսուրսների երկարաժամկետ կառավարման մեջ:***

***Կուր գետը եւ իր վտակները աշխարհագրական մի ընդարձակ տարածք են ընդգրկում, այդ թվում՝ Հայաստանը, Ադրբեջանը եւ Վրաստանը: ԵՄ կողմից ֆինանսավորվող «Կուրի ավազանի անդրսահմանային գետերի կառավարում» տարածաշրջանային ծրագրի նպատակն է բարելավել բնական ջրային ռեսուրսների որակը եւ օգնել Հարավային Կովկասի երեք երկրներին՝ պահպանելու բնության կողմից իրենց տված ժառանգությունը: Մասնակից երկրներն են Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը: Ծրագիրը նախատեսված է 2008-2011թթ. համար, բյուջեն 4 մլն եվրո է: Բացի այդ, լրացուցիչ 1,2 մլն եվրո հատկացված է սարքավորումների համար: Հայաստանի դերն այս գործում հետեւյալն է. պետք է հետեւի Կուրի ամենամեծ վտակին՝ Արաքս գետին, որ սկիզբ է առնում Թուրքիայից, հոսում Հայաստանի միջով եւ միանում Կուրի հոսանքին Ադրբեջանում:***

## Հասարակական տեսանկյունը

Դեբեդ գետի կիրճի ստորին հատվածում, Հայաստանի հեռավոր հյուսիսում, վրացական սահմանի մոտ, կտրտված լեռների ծալքերի մեջ բույն է դրել փոքր քաղաք Ալավերդին: Գետը, որ հոսում է քաղաքի միջով, տեղի համայնքի սիրտն է: «Ամռանը գետը հանգստյան գոտու է վերածվում փոքր քաղաքի համար», ասում է տեղի բնակիչ 48-ամյա **Գայանե Պողոսյանը**: «Տեղի բնակիչները իջնում են գետի ափ՝ հանգստանալու, քանի որ այլ տեղեր չեն կարող մեկնել: Մենք լողանում ենք եւ ձուկ բռնում այստեղ»:

Բայց 18-րդ դարից ի վեր Ալավերդին նաեւ պղնձի հանքերի բնօրրան է, հանքային համալիրը մինչեւ հիմա էլ այստեղ է գործում, որն առիթ է տալիս Հայաստանի հարեւաններին՝ մեղադրելու գետի ջրերը աղտոտելու մեջ: Բնակիչները չեն ցանկանում ուղղակի խոսել այդ մասին, բայց նրանք ասում են, որ գետն այնքան էլ մաքուր չէ, ինչպես նախկինում:

«Ալավերդու բնակիչները չեն ուզում հրապարակավ խոսել գետի մասին», ասում է մի տարեց քաղաքացի, հայտնի որպես ընկեր **Բարսեղյան**: «Այստեղ դեռեւս ձուկ կա, բայց, անկեղծ ասած, դրանց տեսակների թիվը նվազել է»: Ուրիշներն էլ ասում են, որ գետի ջուրը աղտոտվել է, քանի որ «մարդիկ տարբեր բաներ են նետում գետի մեջ», բայց նրանք խուսափում են մեղադրել մոտակայքում գտնվող որեւէ արդյունաբերական աղտոտողի: «Դա իմ գործը չէ», ասում են նրանք:



*Դեբեդ գետը շրջակայքի ամբողջ գեղեցկությամբ*

# Գետերը, որ կամրջելու են կովկասյան ջրբաժանը



*Դեբեդը Ալավերդիում*



*Վոլոդյա Նարիմանյան*

## Ծրագրի ղեկավար. «Որպեսզի խուսափենք Արեւմուտքի սխալներից»

Այնուամենայնիվ, ԵՄ կողմից ֆինանսավորվող Կուր գետի ծրագրի համար նմանատիպ խնդիրներն են հենց բուն էությունը: Ըստ ծրագրի հայաստանյան ղեկավար **Անատոլի Պիչուգինի**՝ «Գործերն այնքան էլ վատ չեն, ինչպես թվում են»: «Մարդիկ հակված են խնդիրներն ուռճացնելու, երբեմն նույնիսկ չափազանցելու: Իհարկե, կան խնդիրներ, բայց ջրերը մեծ մասամբ մաքուր են, մինչեւ արդյունաբերությունն ամբողջովին չզարգանա Հայաստանում: Երկիրը դեռ կարող է հպարտանալ իր լայնածավալ ջրային ռեսուրսներով»:

«Այսօր հիմնական խնդիրը խուսափելն է Արեւմուտքի սխալներից», ասում է նա: ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի (5,2 մլն եվրո ընդհանուր արժողությամբ, 2008-ից մինչեւ 2011-ը) նպատակն է մեծացնել շրջակա միջավայրի պահպանության պետական պատասխանատուների հնարավորությունները, հետեւել եւ աջակցել նրանց, ովքեր ներգրավված են ջրային ռեսուրսների երկարաժամկետ կառավարման մեջ՝ հասկանալու, որ ջրային ռեսուրսների վրա ճնշման մեծացման ժամանակ ավելի լավ է կանխել աղտոտումը, քան հետո պայքարել դրա հետեւանքների դեմ:

Ծրագրի հիմնական բաղադրիչներից մեկը ԵՄ ջրային շրջանակային դիրեկտիվի կիրառումն է՝ գետավազանների կառավարման փորձնական ծրագրերի միջոցով, որ մշակված է յուրաքանչյուր մասնակից երկրում: Ըստ Պիչուգինի, Արաքս գետի ավազանում առկա են երկու հիմնական խնդիրներ՝ կոմունալ ջրերի հեռացումը եւ աղբը, որ լցնում են գետերը: Բայց, այնուամենայնիվ, Արաքսն ավելի մաքուր է, քան եվրոպական շատ գետեր:

**Վոլոդյա Նարիմանյանը**, Հայաստանի բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալն է: Նրա խոսքերով, ծրագրի հայաստանյան գործընկերները գրեթե ավարտել են օրենսդրական-կառուցվածքային բարեփոխումների ներկայացումը:

«Մենք փորձում ենք մոտենալ ԵՄ օրենսդրությանը՝ մեր օրենքների եւ կանոնադրության մեջ ներառելով ԵՄ ջրային շրջանակային դիրեկտիվի դրույթները», ասում է Նարիմանյանը ավելացնելով, որ ջրավազանային կառավարման ծրագրերը Հայաստանում լավ ընթացքի մեջ են. Դեբեդն ու Աղստեւը ընտրվել են որպես մոդելային գետեր: «Այս ծրագրի շրջանակներում նախնական մշակվում են Դեբեդի եւ Աղստեւի գետավազանների կառավարման նախագծերը՝ որպես մեթոդաբանություն ընտրված վեց ավազանների հետագայում կառավարման համար», ասում է Նարիմանյանը:

## Գետերի համատեղ դիտարկումը

Նախատեսված է, որ ծրագիրը Հայաստանում ստանալու է տեխնիկական աջակցություն՝ դիտարկումներ անցկացնելու համար, եւ մշակելու է տեղեկատվական համակարգ, որ տեղեկատվություն ապահովի անդրսահմանային գետերի վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում համատեղ դիտարկում է իրականացնում Հայաստանի Շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնը՝ ազգային թիմերի մասնակցությամբ: Ջրերի նմուշները ստուգման համար ուղարկվում են միջազգային լաբորատորիաներ:

«Այդ ստուգումները ցույց տվեցին, որ վրացական Խրամ գետն ավելի աղտոտված է, քան Դեբեդը (Հայաստան): Եվ այժմ վրացի փորձագետները չեն պնդում, թե Հայաստանն է աղտոտում Կուրը: Նույնիսկ Ադրբեջանի այդ մեղադրանքների տոնայնությունն է նվազում», ասում է կենտրոնի պետի տեղակալ **Սեյրան Մինասյանը**: Ծրագրի ազգային համակարգող, ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ Վահագն Տոնոյանը համաձայն է սրան. «Հարավային Կովկասի երկրները հաճախ են միմյանց մեղադրում ջրերի աղտոտման մեջ: Իրականում, նրանք երբեւէ չեն անցկացրել համատեղ դիտարկում՝ հասկանալու տվյալների տարբերության պատճառը»:

Ազգային համակարգողն ասում է, որ երեք երկրները պետք է աշխատեն ընդունված նմուշառման եւ նմուշների վերլուծության մեթոդաբանությամբ, ինչը կօգնի, որ իրար անհիմն մեղադրանքներ չներկայացնեն: Նա հույս ունի, որ այս գործում առաջընթացը կարող է երկարացնել ծրագրի կյանքը: «Հուսով ենք, որ որոշ նախաձեռնություններ, օրինակ՝ համատեղ դիտարկման ծրագիրը, Հարավային Կովկասի կողմից կշարունակվեն նաեւ առանց դրսի ֆինանսավորման», ասում է **Տոնոյանը**:

Այնուամենայնիվ, Դեբեդի եւ Աղստեւի ափերին բնակվողները մնում են այն համոզմունքին, որ իրենց ջրերն աղտոտված են՝ կարեւորելով վստահելի տեղեկատվության անհրաժեշտությունը, մի բացթողում, որ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիրը նպատակ ունի լրացնելու՝ հանրությանը իրազեկելով շրջակա միջավայրի որեւէ պոտենցիալ վտանգի մասին: Ծրագրի հանրային մասնակցության եւ կարողությունների հիմնման փորձագետ **Լուսինե Տասլակյանը** հավատում է, որ անկեղծությունն ամենակարեւոր գործոններից մեկն է, եւ հանրային իրազեկման մակարդակի բարձրացման ջանքերի առաջին տեսանելի արդյունքը կլինի Արաքս գետի մասին գրքույկի հրատարակությունը: Նրա խոսքերով, «Այն կօգնի հասարակական հետաքրքրությունը սեւեռելու Արաքս գետի պատմությանն ու մշակույթին: Նպատակն է ոչ միայն ներկայացնել Արաքսի ավազանը, այլեւ մարդկանց մոտեցնել բնությանը». մի կարեւոր առաջնային քայլ՝ ընդհանուր ժառանգության պահպանման գործում հասարակական մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Օբաման ստացավ ազդանշանը, կարծում եմ՝ «ցեղասպանություն» բառը չի արտասանի»

*1-ին էջից*

**Դիվանագիտական շրջանակներից «Հյուրիեթի» ստացած տեղեկության համաձայն, ԱՄՆ նախագահի եւ Թուրքիայի վարչապետի հանդիպմանը քննարկվել է նաեւ հայ-թուրքական արձանագրություններին առնչվող «ճանապարհային քարտեզ»: Վարչապետ Էրդողանը նախագահ Օբամային պատմել է Կովկասում եւ Միջին Արեւելքում խաղաղության հաստատման համար Թուրքիայի գործադրած ջանքերի մասին: Ի պատասխան, նախագահ Օբաման խոստացել է անել այն, ինչ անհրաժեշտ է ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունն ակտիվացնելու, ինչպես նաեւ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումն արագացնելու համար:**

**Հայ-թուրքական արձանագրությունների «ճանապարհային քարտեզը», որի շրջանակներում, ըստ «Հյուրիեթին» իրազեկող դիվանագիտական աղբյուրների, քննարկվել են նաեւ Ղարաբաղի հակամարտության, հարակից շրջաններից հայկական զորքերի դուրսբերման, ինչպես նաեւ հայ-թուրքական սահմանի բացման հարցերը, որպես առաջնահերթ խնդիր դրվել է նաեւ Քլինթոն-Դավութօղլու հանդիպումների օրակարգում:**

**«Հյուրիեթի» վկայությամբ, հանդիպմանը նախագահ Օբաման որեւէ անդրադարձ չի կատարել ապրիլի 24-ի իր առաջիկա ելույթին: Սակայն թուրքական կողմը համոզված է, որ նա, ինչպես անցյալ տարի էր, «1915-ի իրադարձությունների առնչությամբ կօգտագործի «մեծ եղեռն» արտահայտությունը եւ կնշանակի արձանագրությունների կարեւորությունը»: Այս ամենի առումով, «Հյուրիեթին» լրացնում է «Սաբահը» եւ գրում. «Երկու երկրների ղեկավարները համաձայնության եկան, որ շարունակվի պետքարտուղար Քլինթոնի միջնորդությունը Հայաստան-Թուրքիա հարաբերություններում, որի շրջանակներում նա հանդես կգա մաքոքային դիվանագիտությամբ, որպեսզի նորմալանան Երեւան-Անկարա հարաբերությունները, արձանագրությունները վավերացվեն եւ առաջընթաց ապահովվի Լեռնային Ղարաբաղում»:**

**«Ռադիկալն» ավելացնում է. «Լրագրողներից մեկի «Ի՞նչ եք ակնկալում նախագահ Օբամայի ապրիլի 24-ի ելույթից» հարցին ի պատասխան՝ Էրդողանն ասաց. «Մինչ այդ հայտարարություն արդեն արել եմ: Անձամբ ես նման բան («ցեղասպանություն» բառի արտասանում) չեմ սպասում: Կարծում եմ, որ կողմերը փոխադարձաբար ստացան անհրաժեշտ ազդանշանները»: Մեկ այլ լրագրող հարցրեց. «Դուք միշտ պահանջել եք, որ երրորդ երկրները չմիջամտեն Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերություններին եւ խորհրդարանները զերծ մնան հայկական բանաձեւի ընդունումից: Այդ մասին իրազեկե՞լ եք Օբամային», Էրդողանը պատասխանեց. «Այն, ինչ ասել եմ, նույնությամբ կրկնեցի նրան: Ես դռան առջեւ մեկ, իսկ հետեւում մյուս բանն ասելու սովորություն չունեմ»: «Երբ Դուք ասացիք, Օբաման ի՞նչ պատասխանեց: Հստակ որեւէ բան ասա՞ց Ձեզ» հարցին Էրդողանը պատասխանեց «Տեսնենք տերն ինչ կանի, ինչ էլ անի, լավը կանի» խոսքերով»:**

**Հայաստանի, ապա եւ ԱՄՆ-ի նախագահի հետ Թուրքիայի վարչապետի հանդիպումների արդյունքները դեռեւս ամփոփված չեն: Սակայն առանց դրա էլ ակնհայտ է, որ հանդիպումներն Էրդողանի համար եղել են ոչ թե նպատակ, այլ միջոց: Նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանը վարչապետ Էրդողանը, հակառակ Բաքվում Ադրբեջանին տված խոստումներին եւ բազում հայտարարություններին, հրաժարվել է Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացը պայմանավորել ղարաբաղյան հիմնահարցով, որ նախագահ Օբամային հանդիպի նպաստավոր պայմաններում: Բարաք Օբամայի ներկայությամբ նա Թուրքիայի հավատարմությունն է հայտնել Հայաստանի հետ ստորագրված արձանագրություններին, որ ապրիլի 24-ին «ցեղասպանություն» բառի օգտագործումից զերծ պահի ԱՄՆ-ի նախագահին:**

**Այլ կերպ, Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարչապետի, այսպես կոչված, բարյացակամությունը, արձանագրությունների վավերացման պատրաստակամությունն ու հայ-թուրքական նորմալացման գործընթացը նպատակին հասցնելու «վճռականությունը» բխում են թուրքական պետության ապրիլի 24-ի հետ կապված հաշվարկներից: Սա նշանակում է, որ ապրիլի 24-ից հետո նա կվերադառնա նախկին դիրքերը, մոռանալով, ըստ երեւույթին, թուրքական ժխտողականության եւ Թուրքիայի հայկական քաղաքականության դիրքերի սպառման մասին: Հիշեցման կարգով նշենք, որ ապրիլի 24-ը, ի տարբերություն Թուրքիայի ժխտողականությանն ու հայկական քաղաքականությանը, 2010-ով չի սպառվում:**

AZG NEW PDF.qxd 14/04/2010 21:08 Page 1



# Վաշինգտոնյան գագաթաժողովի 47 մասնակիցները որոշեցին «գործել նորովի»

## *ԱՄՆ-ը եւ ՌԴ-ն կոչնչացնեն 34-ական տոննա պլուտոնիում*

Վաշինգտոնում երեկ ավարտված միջուկային անվտանգության գագաթաժողովում Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը ստորագրել են համաձայնագրեր ռազմական պլուտոնիումի ավելորդ պաշարների ոչնչացման վերաբերյալ: Փաստաթղթի համաձայն, կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ոչնչացնել 34 տոննա բանեցված պլուտոնիում:

Ռուսների հաշվարկներով, պաշարների ոչնչացման գործողությունը կարժենա 2,5 մլրդ դոլար: Արտգործնախարար **Սերգեյ Լավրովի** խոսքերով, այդ գումարից 400 միլիոնը կհատկացնի Միացյալ Նահանգները:



Բացի դրանից, ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը Վաշինգտոնում հայտարարել է, որ ինքը կփակի ռազմական պլուտոնիում արտադրող վերջին ռեակտորը, որը գտնվում է Ժելեզնոգորսկում (Կրասնոյարսկի երկրամաս): Այդ ռեակտորը ռազմական կարիքների համար պլուտոնիում է արտադրել 52 տարի, նշում է BBC գործակալությունը:

ԱՄՆ նախագահ **Բարաք Օբաման** ռուսական վերջին ռեակտորը փակելու որոշումը բնութագրել է «կարեւոր առաջընթաց քայլ», որը «ցուցադրում է Ռուսաստանի առաջատար դերը միջուկային անվտանգության ասպարեզում եւ հավելյալ խթան տալիս զինաթափման ընդհանուր ջանքերին»:

Գագաթաժողովը փակելով՝ Օբաման հայտարարել է, որ դրա մասնակից 47 երկրները համաձայնել են 4 տարվա ընթացքում հասնել իրենց բոլոր միջուկային նյութերի անվտանգ պահպանությանը, ձեռնարկելով լրացուցիչ նախազգուշական միջոցներ:

Մասնակից երկրների ղեկավարները նաեւ որոշել են ջանքեր գործադրել, որպեսզի միջուկային նյութերը չհայտնվեն ահաբեկչական խմբավորումների ձեռքին:

Օբամայի խոսքերով, «Ալ Ղաիդան» եւ նման կազմակերպությունները «արդեն փորձել են հայթայթել միջուկային ռումբի արտադրության համար անհրաժեշտ նյութեր, եւ եթե դա երբեւիցե նրանց հաջողվի, ապա անպայման ձեռնամուխ կլինեն այդ արտադրությանը»:

«Հանուն մեր ընդհանուր անվտանգության պետք է սովորենք մտածել եւ գործել նորովի: Հենց սա՛ է մեր խնդիրը», ընդգծել է ԱՄՆ նախագահը:

Ավելի վաղ Մեքսիկան խոստացել էր լիովին ազատվել իր ռազմական ուրանի պաշարներից: Այդ նպատակով մեքսիկացիները գերհարստացված ուրանը վերամշակելով կդարձնեն սովորական միջուկային վառելիք: Այդ աշխատանքը կիրականացվի ԱՄՆ-ի, Կանադայի եւ ՄԱԳԱՏԷ-ի հետ համատեղ:

Ուկրաինան իր հերթին հայտարարել է, որ պատրաստ է սեփական գերհարստացված ուրանը պահպանության ուղարկել արտերկրի (Ռուսաստանի կամ ԱՄՆ-ի) հատուկ պահեստարաններ:

Գագաթաժողովի մասնակիցների ամփոփիչ հայտարարության մեջ ասվում է, որ աշխարհի երկրներում ձեռնարկվող անվտանգության խիստ միջոցները «չպետք է խախտեն խաղաղ նպատակներով եւ տեխնոլոգիական խնդիրների համար միջուկային էներգիա մշակելու եւ օգտագործելու պետությունների իրավունքը»:

Վաշինգտոնի գագաթաժողովն անցել է առանց Իրանի եւ ԿԺԴՀ-ի մասնակցության, որոնք ԱՄՆ-ից հրավեր չէին ստացել:

# Ուժեղ երկրաշարժ ՉԺՀ-ի հյուսիս-արեւմուտքում



Ապրիլի 14-ի առավոտյան 7,1 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել Չինաստանի հյուսիս-արեւմուտքում՝ Ցինհայի նահանգում: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ փլուզվել են բազմաթիվ շենքեր: Փլատակներում մնում են հարյուրավոր մարդիկ, այդ թվում՝ դպրոցականներ:

CNN հեռուստաընկերությունը նշում է, որ երկրաշարժի պահին շատերը դեռ տանն էին, իսկ դպրոցներում արդեն սկսվել էին պարապմունքները: Հաղորդվում է, որ դպրոցների մեծ մասը դիմացել է տարերքի հարվածին:

ՉԺՀ պետական սեյսմիկ վարչության տվյալներով, ստորգետնյա ցնցումներն արձանագրվել են տեղական ժամանակով 7-ն անց 49 րոպեին: Էպիկենտրոնը եղել է 33 կմ խորության մեջ, Ցինհայի նահանգի Տիբեթյան ինքնավար պրեֆեկտուրայի Յուշու գավառում:

Չժունգո սինվեն գործակալությունը հաղորդում է, որ գավառում ավերված է շինությունների մոտ 90 տոկոսը, խախտված է բջջային կապը, չկա էլեկտրականություն: Տների մեծ մասը փայտից եւ կավից սարքված միահարկ շինություններ են, նշում է ՌԻԱ գործակալությունը:

Ցզեգու բնակավայրում փլուզվել է տեխնիկական ուսումնարանը, բազմաթիվ ուսանողներ մնում են փլատակներում: Ավերված է նաեւ վարչական շենքերի մի մասը:

Ցինհայի նահանգը սահմանակից է Տիբեթի ինքնավար շրջանին եւ համեմատաբար նոր է բնակեցված: 2008-ի տվյալներով՝ նահանգում ապրում է 5,54 մարդ: Յուշու գավառում կան 1 ավան, 8 գյուղ եւ 67 հազար բնակիչ:

# Նոր կառավարությունը Բակիեւի հետ բանակցությունը չի բացառում

Ղրղզստանի ժամանակավոր կառավարության ղեկավար **Ռոզա Օթունբաեւան** չի բացառում տապալված նախագահ Կուրմանբեկ Բակիեւի հետ բանակցելու հնարավորությունը: Բանակցությունը կարող է սկսվել ամենամոտ ժամանակներս՝ երկրի հարավում փոխվարչապետ Ազիմբեկ Բեկնազարովի ուղեւորության ժամանակ: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:

Օթունբաեւան երեկ լրագրողներին հայտարարել է, որ նման հանդիպում անցկացնելու համար «նախ հարկավոր է որոշել դրա ձեւաչափը»: Ուղեւորության շրջանակներում փոխվարչապետը հանդիպումներ կունենա տեղական բնակչության հետ, գուցե նաեւ՝ Ջալալ-Աբադում գտնվող Բակիեւի հետ:

Միեւնույն ժամանակ Օթունբաեւան ընդգծել է, որ նոր իշխանությունների կարծիքով, նախագահը պետք է դատվի: «Ինչ վերաբերում է Բակիեւի հարազատներին եւ պաշտպանության նախկին նախարարին, նրանք գնդակահարել են քաղաքացիների, եւ խոսք անգամ չի կարող լինել նրանց ապահովության երաշխիքներ տալու մասին, բացի դատարանի իրավաբանական պաշտպանությունից», ավելացրել է ժամանակավոր կառավարության ղեկավարը: Օթունբաեւան շեշտել է, որ «նրանց գործերը թույլ չեն տալիս բանակցել նրանց հետ»:

Նախօրեին Բակիեւը հայտարարել է, որ ինքը մտադիր չէ վերադառնալ Բիշքեկ, ինչպես կուզենային նոր իշխանությունները: Բակիեւը պատրաստ է ինքնակամ հրաժարվել նախագահությունից, եթե ժամանակավոր կառավարությունն ապահովի իր եւ ազգականների անվտանգությունը:



## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ առ 01. 01. 2010 թ.** **Ձեւ N1**

| | | |
|---|---|---|
| | | ծածկագիրը |
| Կազմակերպության անվանումը | «Նելգա» ՍՊԸ | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | շահումով խաղեր | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 282.110.06551 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 01012091 |
| Չափի միավորը | | մեկ հազար ՀՀ դրամ |
| Գտնվելու վայրը | Երեւան, Դոյի փ. 18 շ., 16 բն. | |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Կոտայքի մարզ, գ. Ջովունի 1-ին փ. 153 | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | - | 1303 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | - | 5000 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 074 | - | 6303 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | - | 50 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | - | 50 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | - | 6353 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | - | 50 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | - | 50 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | - | 1303 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | - | 1303 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | - | 5000 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | - | 5000 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | - | 6353 |

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2009 թ.,** **Ձեւ N2**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տար (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | - | - |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | - | - |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | - | - |
| Իրացման ծախսեր | 040 | - | - |
| Վարչական ծախսեր | 050 | - | - |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | - | - |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | - | - |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | - | - |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | - | - |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | - | - |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | - | - |

Ղեկավար Ա. Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ Ա. Մկրտումյան

**«ԳՐ-ԱՎ-ՄՈ»ՍՊԸ-ի 2009 թ-ի Հաշվապահական Հաշվեկշիռ** **Ձեւ N1**

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | - | 10 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 3 | 2,0 |
| Ընթացիկ դրամական ներդրումներ | 190 | - | 15764 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 1209 | 1215,0 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում | 210 | 13 | 13 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 1225 | 17004,0 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50,0 |
| Կուտակված շահույթ | 270 | 70 | 412,0 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 120 | 462,0 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 850 | 13950 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 850 | 13950,0 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 215 | 215 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | - | 2000 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 33 | 263,0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | - | 114,0 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 7 | - |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 255 | 2592,0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 1225 | 17004,0 |

**«ԳՐ-ԱՎ-ՄՈ» ՍՊԸ-ի 2009թ-ի Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն** **Ձեւ N2**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 3456 | 7465,0 |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 3456 | 7465,0 |
| Վարչական ծախսեր | 050 | 2571 | 5393,0 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 885 | 2072,0 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում | 070 | - | 5 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | 230 | - |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 655 | 2077,0 |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում | 130 | - | -1320 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 655 | 757,0 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 655 | 757,0 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | 177 | 415,0 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 478 | 342,0 |

Տնօրեն՝ Ս. Գրիգորյան



**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 14.04.2010 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 396.00 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 540.00 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 13.66 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 225.12 |

AZG NEW PDF.qxd 14/04/2010 22:39 Page 1



# «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ»

ARDSHININVESTBANK

**Տեղեկություններ բանկի մասին**

- «Արդյունաբերության եւ Շինարարության Ինվեստիցիոն Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը 2003թ. փետրվարին գրանցվեց ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ եւ ստացավ բանկային գործունեություն իրականացնելու թիվ 83 լիցենզիան
- 2003թ մարտ-մայիս ամիսներին ձեռք բերեց 80 տարվա պատմություն ունեցող եւ տնտեսության ճյուղերի վարկավորման ուղղությամբ մասնագիտացած հանրապետության համակարգաստեղծ բանկերից մեկի՝ «Արդշինբանկ» ԲԲԸ ակտիվների եւ պարտավորությունների զգալի մասը եւ լայն մասնաճյուղային ցանցը (24 մասնաճյուղ)
- 2003թ նոյեմբեր ամսին ձեռք բերեց Հանրապետության հնագույն բանկի՝ «Հայագրոբանկ» ԲԲԸ-ի բիզնեսի հիմնական մասը իր ենթակառուցվածքներով (35 մասնաճյուղ)
- Բանկը հանդիսանում է.

  Հայաստանի բանկերի միության անդամ,
  Հայ-վրացական գործարար համագործակցության ասոցիացիայի անդամ,
  MasterCard/Europay համաշխարհային վճարային համակարգի փոխկապակցված անդամ,
  SWIFT համակարգի բաժնետեր,
  ՀՀ տարածքում գործող «ArCa» պրոցեսինգային ընկերության բաժնետեր եւ լիիրավ անդամ,
  «Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության» անդամ,
  «Հայաստանի ֆոնդային բորսա» կազմակերպության անդամ:

- Բանկը կառավարում է մասնաճյուղային լայն ցանց՝ 49 մասնաճյուղ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում եւ 6 մասնաճյուղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ինչպես նաեւ ունի ներկայացուցչություն Փարիզում:
- Բանկը գտնվում է Գրիգոր Լուսավորչի 13 հասցեով: 2010 թվականի առաջին եռամսյակում բանկի աշխատակիցների միջին օրական թվաքանակը կազմել է 1048 աշխատակից, որից 197-ը ստորաբաժանումների ղեկավարներ:
- Բանկի, նրա գործունեության, ֆինանսական ցուցանիշների, ծառայությունների մասին ավելի լայնածավալ ինֆորմացիա զետեղված է բանկի ինտերնետային կայքում - www.ashib.am: Նշված կայքում է գտնվում նաեւ բանկի ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը (ներառյալ կից ծանոթագրությունները), աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաեւ տեղեկատվություն բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց եւ բանկի ղեկավարների վերաբերյալ:

**Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը**

- Բանկի ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտներին համապատասխան:
- Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (հազարների ճշտությամբ):
- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են բանկի գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է, որ Բանկի ակտիվները պետք է իրացվեն եւ պարտավորությունները մարվեն վերջինիս գործունեության բնականոն ընթացքում:

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

*Հավելված 6*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Ֆինանսական արդյունքների մասին (ձեւ թիվ 6)**
31 Մարտ 2010 թ
**«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ,** ք.Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար ՀՀ դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություններ | Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) | Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչեւ համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) |
|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 3 | 2,439,487 | 3,317,297 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | 3 | (1,264,650) | (1,265,967) |
| Զուտ տոկոսային եւ նմանատիպ եկամուտ | | 1,174,837 | 2,051,330 |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով եկամուտներ | 4 | 404,244 | 456,282 |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով ծախսեր | 4 | (1,866) | (1,460) |
| Ստացված զուտ կոմիսիոն եւ այլ վճարներ | | 402,378 | 454,822 |
| Եկամուտ շահաբաժիններից | | | |
| Զուտ եկամուտ առեւտրային գործառնություններից | 5 | 267,951 | 724,846 |
| Այլ գործառնական եկամուտներ | 6 | 46,942 | 31,658 |
| Գործառնական եկամուտներ | | 1,892,108 | 3,262,656 |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | 7 | 320,251 | (397,722) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | 8 | (866,624) | (889,329) |
| Այլ գործառնական ծախսեր | 9 | (409,831) | (391,379) |
| Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս | 10 | | |
| Շահույթը/ (վնասը) մինչեւ հարկումը | | 935,904 | 1,584,226 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 11 | (202,628) | (272,424) |
| Շահույթը (վնասը) հարկումից հետո | | 733,276 | 1,311,802 |
| Հաշվարկված շահաբաժիններ, այդ թվում՝ | | | |
| արտոնյալ բաժնետոմսերի գծով | | | |
| սովորական բաժնետոմսերի գծով | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | 12 | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | 12 | | |
| Ժամանակաշրջանի զուտ շահույթ | | | |
| Այդ թվում՝ | | | |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | | | |
| Փոքրամասնության բաժնեմաս | | | |

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.10 թ.

*Հավելված 7*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (ձեւ թիվ 7)**
31 Մարտ 2010 թ
**«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ,** ք.Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար ՀՀ դրամ)*

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ |
|---|---|---|---|---|
| 1 | Ակտիվներ | | | |
| 1.1 | Կանխիկ դրամական միջոցներ եւ մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 13 | 32,561,473 | 31,769,574 |
| 1.2 | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ | | 3,838 | 3,838 |
| 1.3 | Պահանջներ բանկերի եւ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 14 | 15,692,406 | 11,764,074 |
| 1.4 | Առեւտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ | 15 | | |
| 1.5 | Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 16 | 48,040,038 | 54,023,461 |
| 1.6 | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 17 | 11,429,796 | 10,760,717 |
| 1.7 | Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումներ | 18 | | |
| 1.8 | Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում | 19 | | |
| 1.9 | Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 20 | 8,859,133 | 9,054,424 |
| 1.10 | Հետաձգված հարկային ակտիվներ | 11 | | |
| 1.11 | Այլ ակտիվներ | 21 | 1,531,202 | 1,389,408 |
| | Ընդամենը՝ ակտիվներ | | 118,117,886 | 118,765,496 |
| 2 | Պարտավորություններ | | | |
| 2.1 | Պարտավորություններ բանկերի եւ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 22 | 16,938,486 | 13,647,779 |
| 2.2 | Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 23 | 72,669,041 | 77,407,072 |
| 2.3 | Բանկի կողմից թողարկված արժեթղթեր | 24 | | |
| 2.4 | Առեւտրային նպատակներով պահվող պարտավորություն | 25 | | |
| 2.5 | Վճարվելիք գումարներ | 26 | 87,126 | 70,923 |
| 2.6 | Հետաձգված հարկային պարտավորություններ | 11 | 626,266 | 626,266 |
| 2.7 | Պահուստներ | 7 | 107,958 | 108,082 |
| 2.8 | Այլ պարտավորություններ | 27 | 402,547 | 280,744 |
| | Ընդամենը՝ պարտավորություններ | | 90,831,424 | 92,140,866 |
| 3 | Կապիտալ | | | |
| 3.1 | Կանոնադրական կապիտալ | 28 | 13,802,404 | 13,802,404 |
| 3.2 | Էմիսիոն եկամուտ | | 1,711,179 | 1,711,179 |
| 3.3 | Պահուստներ՝ | | 3,750,159 | 3,821,603 |
| 3.3.1 | Գլխավոր պահուստ | | 963,121 | 963,121 |
| 3.3.2 | Վերագնահատման պահուստներ | | 2,787,038 | 2,858,482 |
| 3.4 | Չբաշխված շահույթ (վնաս) | | 8,022,720 | 7,289,444 |
| 3.5 | Կապիտալի այլ տարրեր | 29 | | |
| | Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ | | | |
| | Փոքրամասնության բաժնեմաս | | | |
| | Ընդամենը՝ կապիտալ | | 27,286,462 | 26,624,630 |
| | Ընդամենը՝ պարտավորություններ եւ կապիտալ | | 118,117,886 | 118,765,496 |

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.10 թ.

*Հավելված 8*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձեւ թիվ 8)**
31 Մարտ 2010 թ
**«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ,** ք.Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար ՀՀ դրամ)*

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ | | | Էմիսիոն եկամուտ /վնաս | Պահուստներ | | | Չբաշխված շահույթ/ վնաս | Միջանկյալ - շահութաբաժիններ | Սեփական կապիտալի այլ տարրեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանոնադրական կապիտալ | Հետ գնված կապիտալ | Զուտ գումարը | | Գլխավոր պահուստ | Վերագնահատումից պահուստներ* | Վերաչափումից տարբերություններ* | | | | |
| Հոդվածներ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| **Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)** | | | | | | | | | | | |
| 1. Մնացորդը նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2009 թ. | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 675,308 | 2,623,195 | - | 6,380,166 | - | - | 25,192,252 |
| 1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | |
| 2. Վերահաշվարկված մնացորդը | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 675,308 | 2,623,195 | - | 6,380,166 | - | - | 25,192,252 |
| 3. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր, այդ թվում՝ | - | - | - | - | - | 82,337 | - | - | - | - | 82,337 |
| 3.1. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում | | | - | | | | | | | | - |
| 3.2. Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների եւ հեջավորման գործիքների՝ իրական արժեքի վերաչափման պահուստների աճ կամ նվազում | | | - | | | 82,337 | | | | | 82,337 |
| 3.3.Հետաձգված հարկի ազդեցություն | | | - | | | | | | | | - |
| 3.4. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված այլ եկամուտներ եւ վնասներ | | | - | | | | | | | | - |
| 4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 4.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | | | - | | | | | | | | - |
| 4.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | - | | | | | | | | - |
| 5. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | | | - | | | | | 1,311,802 | | | 1,311,802 |
| 6. Բաշխված շահութաբաժիններ | | | - | | | | | | | | - |
| 7. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | | | - | | | | | | | | - |
| 7.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | - | | | | | | | | - |
| 8. Ներքին շարժեր, այդ թվում՝ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 8.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | - | | | | | | | | - |
| 8.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | - | | | | | | | | - |
| 8.3. Էմիսիոն վնասի ծածկում | | | - | | | | | | | | - |
| 8.4. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | - | | | | | | | | - |
| 8.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | - | | | | | | | | - |
| 9. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում 31 մարտ 2009 թ. | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 675,308 | 2,705,532 | - | 7,691,968 | - | - | 26,586,391 |
| **Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)** | | | | | | | | | | | |
| 9.0. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2010 թ. | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 963,121 | 2,858,482 | - | 7,289,444 | - | - | 26,624,630 |
| 9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | |
| 10.Վերահաշվարկված մնացորդը | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 963,121 | 2,858,482 | - | 7,289,444 | - | - | 26,624,630 |
| 11. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր, այդ թվում՝ | - | - | - | - | - | (71,444) | - | - | - | - | (71,444) |
| 11.1 Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում | | | - | | | | | | | | - |
| 11.2. Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների եւ հեջավորման գործիքների՝ իրական արժեքի վերաչափման պահուստների աճ կամ նվազում | | | - | | | (71,444) | | | | | (71,444) |
| 11.3. Հետաձգված հարկի ազդեցություն | | | - | | | | | | | | - |
| 11.4. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված այլ եկամուտներ եւ վնասներ | | | - | | | | | | | | - |
| 12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում | | | - | | | | | | | | - |
| 12.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | - | | | | | | | | - |
| 13. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | | | - | | | | | 733,276 | | | 733,276 |
| 14. Բաշխված շահութաբաժիններ | | | - | | | | | | | | - |
| 15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | | | - | | | | | | | | - |
| 15.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | - | | | | | | | | - |
| 16. Ներքին շարժեր, այդ թվում՝ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 16.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | - | | | | | | | | - |
| 16.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | - | | | | | | | | - |
| 16.3. Էմիսիոն վնասի ծածկում | | | - | | | | | | | | - |
| 16.4. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | - | | | | | | | | - |
| 16.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | - | | | | | | | | - |
| 17. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31 մարտ 2010 թ. | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 963,121 | 2,787,038 | - | 8,022,720 | - | - | 27,286,462 |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.10 թ.

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

→

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

# «Աղետ» ֆիլմը արթնացրել է գերմանացիներին

«**Ազգի**» ընթերցողներին արդեն տեղեկացրել ենք, որ ապրիլի 9-ին, ժամը 23.30-ին գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը՝ ARD-ն հեռարձակեց Էրիկ Ֆրիդլերի 2009-10 թվականներին պատրաստված «Աղետ՝ մի ցեղասպանություն» 90 րոպեանոց վավերագրական ֆիլմը: Դրանից առաջ ֆիլմը ներկայացվել էր նաեւ Բեռլինում: Իսկ երեքշաբթի օրը՝ ապրիլի 13-ին, ժամը 20.15-ին վերահեռարձակեց գերմանական ARD եւ ZDF հեռուստաալիքների իրադարձություններն ու վավերագրությունը հեռասփռող «Phoenix»-ը, որ ֆիլմի ավարտին 45 րոպեանոց բանավեճ ներկայացրեց հեռուստադիտողների դատին: Գերմանիայում ապրող թուրքական համայնքի նախագահ Բահաթթինա Կայայի, Հալլեի համալսարանի դոկտոր, պրոֆ. Հերման Գոլցի, «Հյուրիեթ»-ից Ահմեդ Կյուլահչիի, «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգից» Կարեն Կրյուգերի, Գերմանահայոց կենտրոնական խորհրդից Իշխան Չիֆթճյանի եւ բանավեճը վարող Ալեքսանդր Կեհլերի միջեւ ծավալված հարցուպատասխանը հաճախ անզուսպ բնույթ էր կրում թուրքական կողմի հարձակողական, փաստազուրկ բարձրաձայնումների պատճառով: Հայերիս համար անակնկալ չէր թուրքերի՝ գերմանական հեռուստաեթերից Ցեղասպանությունն ուրանալու եւ Ադրբեջանի 20 տոկոսը զավթելու պատմությունները, այդուհանդերձ գերմանացիների համար նրանց կեցվածքն առիթ է տվել համոզվելու, որ Թուրքիան ուրացման իր կեցվածքը կփոխի միայն մեծ պետությունների պարտադրանքից ելնելով եւ որ պակաս կարեւոր չէ՝ կրճատեց ԳԴՀ-ում առանց այն էլ սակավ՝ ԵՄ անդամակցության իր նվազ կողմնակիցների թիվը: Ի դեպ, հիշյալ բանավեճը վերահեռարձակվեց երկու անգամ՝ նույն օրը, ժամը 0.00-ին եւ ապրիլի 14-ի առավոտյան՝ ժամը 9.15-ին: Մեր առաջիկա հրապարակումներում առավել հանգամանալից կանդրադառնանք ինչպես հիշյալ բանավեճին, այնպես էլ «Աղետ» ֆիլմին, կփորձենք ներկայացնել գերմանական հասարակության գնահատականը:

Բայց վերջակետից առաջ հպանցիկ փոխանցենք կարեւոր մի քանի շեշտադրում: «Ինչո՞ւ են մեզնից թաքցրել մեր պատմությունը», մեր զրույցներում գերմանացիներից շատերը վրդովված են, որ դասագրքերում Առաջին համաշխարհային պատերազմը հատվածաբար է ներկայացվել, եւ հիմա ֆիլմի միջոցով են տեղեկանում, որ «Կայզերական Գերմանիան մեղսակից է եղել մի քրիստոնյա ժողովրդի ցեղասպանությանը»: Ֆիլմը դիտած գերմանացիների համար, ում հետ զրուցեցինք, այն առաջին հերթին իսկական ճանաչողական նշանակություն ունի: Շատերը խոստովանեցին, որ «Աղետը» դիտել են արցունքախառն աչքերով, հատկապես տպավորված դերասանական կազմի՝ իրենց մարմնավորած կերպարների «ցուցաբերած» համերաշխությունից: «Աղետը» դիտած հայերի համար պատմական, գիտական, տեղեկատվական իմաստով, եթե կարելի է այսպես ձեւակերպել՝ Առաջին համաշխարհայինի այդ «մութ էջերում» նորություններ չկային, բացահայտումը սակայն վավերագրական այդ ֆիլմի գեղարվեստի մեջ է՝ ստեղծագործական խումբը հրաշալի աշխատանք է կատարել, որին արխիվային ամուր հենքի իմացությունն է հուշել ընտրել ֆիլմի զուսպ գույներն ու ձայները: Ականատեսների վկայությունները ընթերցում են Գերմանիայի լավագույն դերասանները՝ այնպիսի հուզմունքով, որ վերապրումը դառնում է իրական, պատմական իրողությունը կենդանի հիշողություն:

Մեր զրուցակիցներից շատերի գնահատմամբ՝ «Աղետը» Հայոց ցեղասպանության վերաբերյալ լավագույն վավերագրությունն է:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

ԱՎՏՈՇՈՒԿԱ

# «Տոյոտան» դադարեցնում է «Լեքսուս Ջի Էքս 460» ավտոմոբիլի վաճառքները

**«Ազգը» մի քանի անգամ անդրադարձել է համաշխարհային ավտոարդյունաբերության հսկաներից «Տոյոտա» ընկերությունում տիրող ճգնաժամին: Ընկերության արտադրանքից դժգոհությունները սպառողների շրջաններում բազմաթիվ են, ամենեւին պատահական չէր գլխավոր տնօրենի հրապարակավ ներողությունը սպառողներից: Այժմ էլ Ճապոնիայի «Տոյոտա» ավտոմոբիլային կորպորացիան կրկին դադարեցնում է իր ավտոմոբիլների վաճառքները: Այս անգամ խոսքը վերաբերում է «Լեքսուս Ջի Էքս 460» ջիպ ավտոմոբիլի վաճառքների ժամանակավոր դադարեցմանը այն պոտենցիալ արատների պատճառով, որոնք կարող են վթարի հանգեցնել ճանապարհին շրջադարձ կատարելիս:**

**Սույն որոշումն արտադրողն ընդունել է ամերիկյան Consumer Reports ազդեցիկ հանդեսում (ԱՄՆ-ի Սպառողների միության հրատարակությունում) հրապարակված հոդվածի պատճառով, որտեղ փորձագետներն ավտոսիրողներին զգուշացնում են այս մոդելի գնման հետեւանքով առաջացող վտանգների մասին:**

**Ինչպես սպասվում էր, «Տոյոտան» վաճառքները դադարեցրել է այնքան ժամանակ, քանի դեռ չի անցկացնի այն համակարգերի եւ մեխանիզմների սեփական հետազոտություն, որոնք կարող են պոտենցիալ արատ ունենալ:**

**Հ. Ա.**

## Հաշվետվություն
## «Արնար բարեգործական» հիմնադրամի գործունեության մասին

1. Ընդհանուր տեղեկություններ հիմնադրամի մասին.
1.1. գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «28» հունվարի 2004 թ. պետական գրանցման վկայական Ա 065334
1.2. գտնվելու վայրը Տավուշի մարզ ք. Իջեւան, Արցախյան փողոց, թիվ 6:
1.3 կապի միջոցները
հեռ. 3-24-62
1.4. հիմնադրամի կառավարման մարմիններում ընդգրկված անձինք
1.4.1 տնօրենը՝ Սարգսյան Արգամ Բորիսի
1.4.2. հոգաբարձուների խորհրդի կազմը՝
1. Ղալումյան Արծրունի Սուրենի
2. Սարգսյան Արգամ Բորիսի
3. Ղազարյան Նարեկ Արմենի
3.1. իրականացված ծրագրերը՝
Տավուշի մարզի Իջեւան քաղաքում
3.2. իրականացվող ծրագրերը՝ մարզադաշտի կառուցում
4. Ֆինանսավորման աղբյուրները՝ 1. ՆՆՖՖ
2. Ղալումյան Արծրունի Սուրենի
3. «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ
5. տարեկան ընդհանուր ծախսերը՝ 2819,0
6. վարչակառավարչական ծախսերը՝ 1800,0
7. ֆինանսական հաշվետվություն

7.1 հաշվեկշիռ

| ցուցանիշը | 01.01.2008 թ. | 01.01.2009 թ. |
|---|---|---|
| հիմնական միջոցներ | 576 | 576 |
| հաշվեկշիռ | 576 | 576 |
| կուտակված շահույթ | 0 | 0 |
| հաշվեկշիռ | 0 | 0 |

7.2 դրամական միջոցների հոսքեր

| | | |
|---|---|---|
| մուտքեր, այդ թվում | 9310 | 2819 |
| ֆինանսավորում | 9310 | 2819 |
| ելքեր, այդ թվում՝ | 9312 | 2819 |
| 1. Աշխատավարձ | 1464 | 1132 |
| 2. սոց. | - | 384 |
| 3. բյուջե | - | 249 |
| 4. հումք. նյութեր | 7819 | 483 |
| 5. այլ ծախսեր | 29 | 571 |

8. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ
աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

***ՀԱՍՏԱՏՎԱԾ Է***
***«Արնար» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ***
***ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 31.03.2010 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ ԿՈՂՄԻՑ***
***ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝***
***ՂԱԼՈՒՄՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ՍՈՒՐԵՆԻ***

*Հավելված 9*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձեւ թիվ 9)**
31 մարտ 2010 թ
«**ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ**» **ՓԲԸ,** ք.Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար ՀՀ դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|---|---|
| 1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | x | x |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը | 1,586,237 | 730,000 |
| Ստացված տոկոսներ | 3,070,347 | 2,119,371 |
| Վճարված տոկոսներ | (1,370,844) | (1,383,964) |
| Ստացված կոմիսիոն գումարներ | 456,282 | 404,244 |
| Վճարված կոմիսիոն գումարներ | (1,460) | (1,866) |
| Առեւտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս) | 29,400 | (8,454) |
| Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս) | 410,940 | 240,773 |
| Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ | 21,143 | 346,478 |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (582,570) | (520,697) |
| Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ եւ վճարված այլ ծախսեր | (447,001) | (465,885) |
| Դրամական հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից | 1,923,203 | 910,288 |
| Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում) | 5,862,110 | 6,444,783 |
| այդ թվում՝ վարկերի եւ փոխատվությունների նվազում/ (ավելացում) | 4,909,884 | 8,554,213 |
| առեւտրային նպատակով պահվող եւ վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում) | 833,562 | (1,247,283) |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում) | | |
| այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում) | 118,664 | (862,147) |
| Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում) | (3,938,907) | (5,534,495) |
| այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում) | (3,318,987) | (5,481,592) |
| այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում) | (619,920) | (52,903) |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչեւ շահութահարկի վճարումը | 3,509,440 | 1,640,288 |
| Վճարված շահութահարկ | (194,134) | (180,000) |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | 3,315,306 | 1,460,288 |
| 2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից | x | x |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Հիմնական միջոցներում եւ ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում) | (31,664) | (7,024) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (79,274) | (31,016) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների օտարում | 36 | 65 |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | | |
| Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից | (110,902) | (37,975) |
| 3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից | x | x |
| Վճարված շահաբաժիններ | | |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | | |
| Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | 633,712 | 968,766 |
| Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում) | 316,300 | 194,992 |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում) | (657,320) | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում | | |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում) | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | | |
| Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից | 292,692 | 1,163,758 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | 4,412,584 | 1,674,804 |
| Դրամական միջոցների եւ դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում) | 7,909,680 | 4,260,875 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 25,209,428 | 42,875,215 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 33,119,108 | 47,136,090 |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.10 թ.

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

**ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ**
(եռամսյակային)

**«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ**
1/1/2010 թ-ից ---31/03/10--- թ.

*(հազ. դրամ)*

| Նորմատիվներ | Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար | ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը | 15,513,583 | 50,000 | Խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 24,390,617 | 5,000,000 | Խախտում առկա չէ |
| Ն1 Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 30.69% | 12.0% | Խախտում առկա չէ |
| Ն21 Բանկի բարձր իրացվելի ակտիվների եւ ընդհանուր ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 50.23% | 15.0% | Խախտում առկա չէ |
| Ն22 Բանկի բարձր իրացվելի ակտիվների եւ ցպահանջ պարտավորությունների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 211.79% | 60.0% | Խախտում առկա չէ |
| Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը | 19.50% | 20.0% | Խախտում առկա չէ |
| Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը | 65.24% | 500.0% | Խախտում առկա չէ |
| Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը | 4.63% | 5.0% | Խախտում առկա չէ |
| Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը | 9.08% | 20.0% | Խախտում առկա չէ |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը | X | Դրամով - 8% Արտարժույթով - 12 % | Խախտում առկա չէ |

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: